# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

11. ապրիլի 2019 թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Քասախ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 11-ի N 5 արտահերթ նիստին ներկա էին ավագանու 4 անդամներ՝ Հ. Ղազարյանը, Ե. Աբրահամյանը, Մ. Վարդանյանը, Ս. Հովհաննիսյանը: Նիստից անհարգելի պատճառներով բացակայում էին ավագանու յոթ անդամներ՝ Ա. Մարդանյանը, Ա. Թովմասյանը, Հ.Գրիգորյանը, Ա. Արմենակյանը, Վ. Ղազարյանը, Ա. Աբրահամյանն ու Գ. Աբգարյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի ժ/պ՝ Նարեկ Մկրտչյանը,

Աշխատակազմի քարտուղարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին աշխատակազմի աշխատակիցները:

Նիստը արձանագրում էր գլխավոր մասնագետ՝ Փառանձեմ Ալոյանը:

Նիստ վարողը ողջունեց նիստին ներկա ավագանու անդամներին և քանի որ, ներկա էին ավագանու չորս անդամներ՝ ուստի քվորում չապահովելու պատճառով Ն. Մկրտչյանը հայտարարեց, որ Քասախ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ 5 արտահերթ նիստը համարվում է չկայացած: Ավագանու անդամ Հրաչիկ Ղազարյանը հարց ուղղեց նիստ վարողին, այն մասին, որ մանրամասն ներկայացնի սուբվենցիոն ծրագրերի փաթեթները, քանի որ նախորդ նիստին նույնպես այդ հարցը դրված էր, սակայն նիստ չկայացավ ու չքննարկվեց համայնքի համար շատ կարևոր և կենսական նշանակություն ունեցող այդ հարցը: Ն. Մկրտչյանը նշեց, որ այո՛ շատ կարևոր հարց է սուբվենցիոն ծրագրերին հավանություն տալը: Քանի որ մեր կողմից ներկայացված ծրագրերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և գրությամբ դիմել են մեզ, որպեսզի առաջիկա մեկ ամսվա ընթացքում հաստատվի ավագանու որոշմամբ և ներկայացվի համապատասխան մարմին:

Նիստ վարողը նշեց, որ որպես համայնքի բնակիչ, ինքը ևս շահագրգռված է այդ՝ համայնքի համար շատ կարևոր ծրագրերի իրականացման համար: Այնուհետև մանրամասն ներկայացրեց ծրագրերը և նշեց, որ բոլորն էլ շատ կարևոր են համայնքի հետագա զարգացման համար: Հ. Ղազարյանը շնորհակալություն հայտնեց, որ բոլոր ծրագրերի վերաբերյալ Ն. Մկրտչյանը տվեց սպառիչ պատասխան և, որ իրականում սուբվենցիոն ծրագրերի գործընթացը սկսվել է, մնում է ավագանին հավանություն տա, և այդ ծրագրերը կյանքի կկոչվեն:

Հ. Ղազարյանը ուղերձով դիմեց համայնքի ավագանուն և բնակիչներին, որ ծրագրերը բավականին կարևոր են համայնքի համար, և որպես ավագանի ու գյուղի բնակիչ շահագրգռված է դրանց իրականացման համար, որով էլ համայնքը տաս քայլով առաջ կանցնի: Իր ափսոսանքը հայտնեց, որ այս կարևոր հարցերը քննարկելու համար այսօր ավագանու մյուս անդամներն ինչ-ինչ պատճառներով չեն ներկայացել և հույս հայտնեց, որ ավագանու հաջորդ նիստերին ավագանու անդամները բոլորը ներկա կլինեն: Այնուհետև ուղերձ հղեց ավագանու բոլոր անդամներին, որ հնարավորինս շուտ հաստատեն և ծրագրերի իրականացման գործընթացին չխոչընդոտեն, սա բխում է Քասախ համայնքի բնակչության շահերից: Քանի որ ավագանին էլ հանդիսանում է բնակչության կողմից ընտրված մարմին, պետք է լուծի ժողովրդի համար առաջնահերթ հանդիսացող խնդիրները:

Ելույթի ձայն խնդրեց ավագանու անդամ Ե. Աբրահամյանը: Նա հանդես եկավ ուղերձով, որ ավագանու բացակա անդամները պետք է հասկանան, որ բնակիչներն իրենց ձայն չեն տվել, որ Արա Մկրտչյանի հրաժարականը պահանջեն ու ամեն ինչ անեն, որ դա լինի, թող գան, միանան ավագանու մյուս անդամներին և գյուղի զարգացմանը խթանեն, իսկ եթե դա է նրանց նպատակը՝ խոչընդոտել ավագանու բնականոն գործունեությանը, ապա բնակիչները թող տեսնեն ու հասկանան ինչ է իրականում կատարվում: Մնացած հարցերի մասով նշեց, որ շատ կարևոր են ներկայացված ծրագրերն ու ամեն ինչ կարվի դրանք իրականացնելու համար:

Նիստ վարողն ի գիտություն ընդունեց բոլոր հարցերն ու ուղերձները և հայտարարեց, որ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը՝ քվորում չապահովելու պատճառով, ավագանու նիստը համարվում է չկայացած:

Արձանագրում ենք նաև, որ ավագանու բոլոր անդամներն օրենքով սահմանված կարգով և ժամկետում, պատշաճ կերպով տեղեկացված են եղել 2019թվականի ապրիլի 11-ի ավագանու արտահերթ 5-րդ նիստի կայացման օրվա, ժամի, օրակարգի և ավագանու որոշումների նախագծերի վերաբերյալ:

Ավագանու ներկա անդամներ՝ ԵՐԵՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՄԻԿՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*Համայնքի ղեկավարի ժ/պ՝* ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

*Նիստն արձանագրեց՝* Փառանձեմ Ալոյանը